ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 174

19 նոյեմբերի 2013 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՀՐ. ՇԱՀԻՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 216 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32 հոդվածի 17 կետով և հիմք ընդունելով Մարալիկ համայնքի ավագանու 25 սեպտեմբերի 2013 թվականի թիվ 47-Ն որոշումը, Մարալիկի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի 19 նոյեմբերի 2013 թվականի թիվ 13 ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան փողոցի N 216 հողամասում անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով (ծածկագիր 08-003-0022-0057) 400 քմ ընդհանուր մակերեսով հողատարածքի աճուրդային եղանակով 138720 (մեկ հարյուր երեսունութ հազար յոթ հարյուր քսան) դրամ արժեքով վաճառքում հաղթող ճանաչել Արամ Սանթոյանին և ճանաչել նրա սեփականության իրավունքը:

2 Արամ Սանթոյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ